



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 230/3- - L « 08 » 12 2021 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԵՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

### հրամայում եմ

1. 2021 թ. ԵՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին Երևանի պետական համալսարանի հիմնական աշխատողներին վճարել տարեվերջյան դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով (անհատական իրավական ակտով) 2021 թվականի սեպտեմբեր ամսվա համար հաշվարկված աշխատավարձի չափով՝ բայց ոչ ավելի քան մեկ դրույքը:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով սահմանված պարգևատրումը չի վճարվում 2021 թվականի ընթացքում վեց ամսից պակաս աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին և սույն հրամանի ստորագրման օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներին:

3. ԵՊՀ հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահին՝ սույն հրամանով սահմանված դրամական պարգևատրումը վճարել սկսած 2021 թ. դեկտեմբերի 14-ից:

ԵՊՀ ՌԵԿՏՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

*Ռ. Զաքարյան* Հ. Կ. ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ